

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Վեհափառ Տեր, սրբազան և հոգեշնորհ հայրեր, Ազգային-Եկեղեցական Ժողովի մեծարգո պատգամավորներ,

Խորին հարգանքի և երախտագիտության որդիական տուրքը մատուցելով Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի լուսավոր հիշատակին, այսօր դուք գումարվել եք մասնակիցը դառնալու Եկեղեցու և ազգային կյանքի պատմական իրադարձության, որը վերջին վեց հարյուր տարիների ընթացքում առաջին անգամ տեղի է ունենում հայոց անկախ պետականության գոյության պայմաններում: Այս հանգամանքը, երբ Ազգային-Եկեղեցական Ժողովի աննախադեպ ներկայացուցչականությունը ինքնին արդեն ամենապերճախոս ապացույցն է այն կարևորության, որով դրոշմված է ձեր սուրբ առաքելությունը: Ազգային-Եկեղեցական Ժողովը տեղի է ունենում նորանկախ հայոց պետականության ամրապնդման լավատեսություն ներշնչող մթնոլորտում: Չնայած Հայաստանին բաժին ընկած դաժան փորձություններին և անհաղթահարելի թվացող դժվարություններին, մեր ժողովրդի դրսևորած յուրօրինակ տոկունության, համբերության, աշխատասիրության, մարտունակության և բարձր պետական մտածողության շնորհիվ հանրապետությունը դուրս եկավ ճգնաժամային իրավիճակից՝ թևակոխելով պետականության ամրապնդման, Արցախյան խնդրի քաղաքական լուծման, տնտեսության կայունացման և զարգացման պատասխանատու հանգրվանը:

Այսօր մենք ամենայն հպարտությամբ և արժանապատվությամբ կարող ենք ազդարարել՝ Հայաստանը ամենակայուն, ամենաժողովրդավարական և ամենաազատական պետությունն է նախկին խորհրդային պետությունների շարքում: Հայաստանն այդ նույն շարքում նաև միակ պետությունն է, որտեղ կասեցված են տնտեսության անկումը և դրամի արժեզրկումը, որտեղ իրականացվում են համակարգված տնտեսական բարեփոխումներ, որոնց շնորհիվ արդեն դրսևորվում են նաև տնտեսական աճի հուսադրող միտումներ: Հայաստանն իր հավասարակշռված արտաքին քաղաքականությամբ, միջազգային կազմակերպություններում ներդրած կառուցողական ջանքերի և բազմաթիվ երկրների հետ հաստատած փոխշահավետ հարաբերությունների շնորհիվ, ո՛չ միայն կարողացավ հաղթահարել քաղաքական և տնտեսական ճգնաժամային երևույթները, այլև դրա-

ԱԵԺ-ում ելույթ է ունենում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը

Հաշվիչ հանձնախումբը հաշվում է քվեները

կանորեն ամրապնդել ազգային անվտանգությունը: Այս տեսակետից մենք այսօր շատ ավելի ապահով ենք, քան անկախության ձեռք բերման սկզբնական շրջանում: Ավելի, քան երբևէ ամուր, ապահով և հզոր է նաև հերոսական Արցախը, որի իղձերի վերջնական իրականացումը կախված է միայն ու միայն ողջ հայ ժողովրդի միասնական կամքի ու կորովի անմնացորդ դրսևորումից: Այս ամենը թույլ են տալիս ամենայն պատասխանատվությամբ հայտարարել, թե՛ ապահովական, թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսակետներից մեր բոլոր դժվարությունները արդեն մնացել են հետևում, իսկ առջևում թեև դեռ մեզ սպասում է տքնաջան աշխատանք, բայց հստակ ճանապարհ և կանխատեսելի հեռանկար: Ուստի միանգամայն վստահ ենք, որ այս ոգևորիչ պայմաններում գումարված Ազգային-Եկեղեցական Ժողովը, լիովին համահունչ դառնալով ներկա մթնոլորտին, պատվով կկատարի իր առջև կանգնած պատասխանատու խնդիրը, որը, պատմական հանգամանքների բերումով, ակնհայտորեն վաղուց դուրս է եկել զուտ եկեղեցական սահմաններից՝ վերածվելով հիրավի համազգային, հիրավի բախտորոշ խնդրի: Վաղը Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն գահին բազմելու է Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոսը, որի ընտրության պատիվն ու պատասխանատվությունը վիճակված է ձեզ:

Ձենք կասկածում, որ դուք վեր կկանգնեք մանր ու երկրորդական խմբակային շահադիտություններից, քարացած հարաբերությունների ավանդական դիրքորոշումներից՝ առաջնորդվելով բացառաբար ձեր խղճի թելադրանքով և Հայ Առաքելական Եկեղեցու առջև կանգնած գերխնդրի, նրա միասնության վերականգնման անհրաժեշտության գիտակցությամբ:

Պատմությունը բացառիկ պատեհություն է ընձեռել՝ ձեռնարկելու Եկեղեցու միասնության վերականգնման համազգային գործը: Եվ ես կարծում եմ, որ Ազգային-Եկեղեցական Ժողովը չի կորցնի այս պատեհությունը: Այլապես սերունդները մեզ չեն ների: Ես ուզում եմ այժմ մի փոքր հրաժարվել դիվանագիտական լեզվից և ձեզ հետ խոսել պարզ մարդկային լեզվով: Եկեք ընդունենք, որ այն իրավիճակը, որ գոյություն ունի մեր Եկեղեցում, ես նկատի ունեմ նրա երկփեղկվածությունը, ազգային խայտառակություն է: Եվ ես չեմ ընդունում ո՛չ մի արդարացում, ո՛չ մի պատճառաբանություն: Բոլոր նրանք, ովքեր նպաստել են այդ պառակտմանը, արդարացում չունեն: Ես չեմ ընդունում այն հիմքերը, որոնք պատճառ դարձան այդ պառակտմանը: Ես չեմ ընդունում, որ Կրեմլի կամ ԿԳԲ-ի գործակալ դիտվող Էջմիածնական Եկեղեցին ավելի վատ է ծառայել մեր ժողովրդին, քան Կիլիկիո Աթոռը: Պարզապես հայ ժողովուրդը ինչպես անցյալում, այս անգամ էլ դարձել է գերտերությունների խաղալիքը և ծառայել սառը պատերազմի նպատակներին: Այսօր ունենալով հնարավորություն առանց օտարի թելադրանքի, առաջին անգամ լուծելու մեր հարցերը ինքնուրույնաբար, լուծելու մեր Եկեղեցու առջև կանգնած այս գերագույն խնդիրը, որը ինձ հիշեցնում է Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու մեծագործությունը, որոնք խավարամիտ շրջաններում այնքան լայնախոհություն, այնքան ազգային մտածողություն ունեցան, որ հաղթահարելով մեծագույն դժվարություններ, կաշառելով օտար տիրակալների, լուծեցին գերագույն ազգային խնդիր, շնորհիվ նաև մի հայրենասեր իշխանի՝ Ռոստոմ Օրբելյանի նվիրատվությանը, որ փաստորեն հիմք դարձավ այսօրվա Հայաստանի, ահա նույն խնդիրն է կանգնած այսօր մեր ժողովրդի առջև

և մեր սերունդների առջև: Մեր սերունդը՝ մենք ձեզ հետ միասին, վերականգնեցինք մեր անկախ պետականությունը, մեր սերունդը ազատագրեց Լեռնային Ղարաբաղը, և մեր սերնդի պարտքն է վերականգնել Հայ Եկեղեցու միասնականությունը:

Ես հավատում եմ ձեր ողջախոհությանն ու լայնախոհությանը և սրտանց հաջողություն մաղթում ձեր աշխատանքին: Շնորհակալություն: